## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀԿ N-41/16
## Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան «9» «փետրվար» 2017թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր » ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Ա. Բլեյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313 -Ն որոշումը (այսուհետև որոշումը ), ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Հանրակրթական ուսուցում» ծրագրով նախատեսված հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան միջին տարեկան 1401 սովորողի ուսուցումը կազմակերպելու համար (այսուհետ՝ ծառայություն), ընդ որում՝

1.տարրական ընդհանուր կրթության գծով միջին տարեկան 698 սովորողի համար.

2.հիմնական ընդհանուր կրթության գծով միջին տարեկան 518 սովորողի համար.

3.միջնակարգ / լրիվ / կրթության գծով միջին տարեկան 185 սովորողի համար.

1.2. սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցման համար՝

2.հիմնական ընդհանուր կրթության գծով 561 սովորողի համար.

3.միջնակարգ / լրիվ / կրթության գծով 178 սովորողի համար.

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. վերահսկել կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը

2.1.2. Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետներում.

2.1.3. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին :

2.2. Կատարողն իրավունք ունի.

2.2.1. Պատվիրատուից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:

2.3. Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն.

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. Սովորողների ուսուցումն իրականացնել հանրակրթության պետական չափորոշչին և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով.

### 3.ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով նախատեսված ՀՀ բյուջեից պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 306615300 (երեք հարյուր վեց միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

1. տարրական ընդհանուր կրթության գծով 110149500 ՀՀ դրամ
2. հիմնական ընդհանուր կրթության գծով 96924300 ՀՀ դրամ
3. միջնակարգ / լրիվ / կրթության գծով 99541500 ՀՀ դրամ

սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի գծով

2.հիմնական ընդհանուր կրթության գծով 311700 ՀՀ դրամ

3.միջնակարգ / լրիվ / կրթության գծով 112600 ՀՀ դրամ

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

## 5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ

5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

## 6.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

## 7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված 2 էջից և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

## 8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,

Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն

Հ/Հ900011005361

Հ/Հ900011005379

Հ/Հ900011005387

ՀՎՀՀ 02512868

Աշխատակազմի ղեկավար

Ն. Հարությունյան

/ ստորագրություն / Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր»

ՊՈԱԿ

ք. Երևան, Ա.Բաբաջանյան 25

Հայէկոնոմբանկի Մեսրաքս մ/ճ

Հ/Հ 163218137665

ՀՎՀՀ 01804186

Տնօրեն՝

Ա. Բլեյան

/ ստորագրություն/ Կ.Տ